Հայաստանի տարածաշրջանային տնտեսական ինտեգրացման հեռանկարները

ԵՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ, Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոն,
տ.գ.թ. Գրիգոր Ռաֆայելի Հայրապետյան
ԵՊՀ Բանբեր, Երևան 2007թ., 2(122), էջ 190-193

Տարածաշրջանային առևտրային համաձայնագրերը միջազգային առևտրի անբաժանելի մասն են կազմում՝ ներկայումս ամբողջ միջազգային առևտրի մոտ կեսը բաժին է ընկնում տարածաշրջանային առևտրային համաձայնագրերին[1]: Այս համաձայնագրերը ԱՀԿ շրջանակներում գործում են բազմակողմանի առևտրային համաձայնագրերի հետ միասին և ունեն ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր: Տարածաշրջանային առևտրային համաձայնագրերը կարող են գրավիչ լինել մի խումբ միմյանց հարևան երկրների համար, քանի որ նրանք, ունենալով ընդհանուր շահեր և մշակութային ընդհանրություններ, ավելի հեշտությամբ են կնքում տարածաշրջանային առևտրային համատեղ համաձայնագրեր, քան հաջողության հասնում բազմակողմանի առևտրային համաձայնագրերում[2]:

Տարածաշրջանային առևտրային համաձայնագրերի և ԱՀԿ փոխհարաբերությունները պարունակում են երեք հիմնական տարեր, որոնք էական ազդեցություն են ունենում միջազգային առևտրային հարաբերություններում.

1. Որքանո՞վ են տարածաշրջանային առևտրային համաձայանգրի նորմերը և սկբունքները առաջ անցնում ԱՀԿ նորմերից և սկզբունքներից:
2. Որքանո՞վ են տարածաշրջանային առևտրային համաձայանգրերը տարբերվում կամ համատեղվում բազմակողմանի առևտրային համակարգի հետ:
3. Տարածաշրջանային առևտրային համաձայանգրերը ի՞նչ ազդեցություն են ունենում տարածաշրջանից դուրս գտնվող երկրների տնտեսության վրա:

Այսպես, համաձայն 2001թ. ԱՀԿ կազմած «Դոհայի Հայտարագրի»՝ տարածաշրջանային առևտրային համաձայնագրերը կարող են առևտրի գլոբալ ազատականացման և ընդլայնման գործում մեծ դեր խաղալ[3]: Սակայն այստեղ գոյություն ունի մի շատ կարևոր հանգամանք, որի վրա անհրաժեշտ է ուշադրություն

[1] Տե՛ս “Global Economic Prospects and the Developing Countries”, Washington D.C., The World Bank, 1995:
[2] Տե՛ս Hoekman Bernard, Trading Blocs and the Trading System: The Services Dimension// Journal of Economic Integration 1995, No 10, pp. 1-31:
[3] Տե՛ս “World Trade Organization, Ministerial Conference Fourth Session”, Doha, 9 - 14 November 2001:

դարձնել: Հնարավոր է, որ տարածաշրջանային առևտրային համաձայնագրերը շրջանակից դուրս գտնվող երկրների համար բարդություններ ստեղծեն տարածաշրջանի երկրների հետ առևտրում՝ դրանով իսկ խոչընդոտելով սպասվող առևտրի գլոբալ ազատականացմանը: Այսինքն՝ տարածաշրջանային առևտրային համաձայանգրերը կարող են լրացնել, բայց ոչ փոխարինել բազմակողմանի առևտրային ազատականացման համակարգին: Տարածաշրջանային առևտրային համաձայանգրերի շատ հետևանքներ աջակցում են բազմակողմանի համագործակցության ընդլայնմանը: Հարկ է նշել, որ չնայած բազմակողմանի առևտրային համագործակցության ընդլայնմանը՝ տարածաշրջանային առևտրային համաձայանգրերը չեն կորցնում իրենց դերը: Այստեղից հարց է առաջանում, թե ինչպես տարածաշրջանային առևտրային և բազմակողմանի առևտրային համաձայանգրերը պետք է գոյակցեն: Սա իր հերթին վերաբերում է Տարիֆների և առևտրի գլխավոր համաձայանգրի (GATT) XXIV հոդվածի կիրառման խնդրին, որն առնչվում է ազատ առևտրի գոտիների և մաքսային միությունների փոխհարաբերությանը ԱՀԿ-ի հետ, ինչպես նաև Տարիֆների և առևտրի գլխավոր համաձայանգրի V հոդվածին, որը հնարավորություն է տալիս ծառայությունների առևտրի ազատականացման համար մասնակցել տարածաշրջանային առևտրային համաձայանգրերին այնքան ժամանակ քանի դեռ նրանք չեն բարձրացրել առևտրային սահմանափակումները ԱՀԿ անդամ երկրների հանդեպ:

Ըստ այդմ Հայաստանի տարածաշրջանային տնտեսական ինտեգրումը կդիտարկենք հետևյալ հնարավոր տարբերակներով՝ ազատ առևտի գոտի, մաքսային միություն և ընդհանուր շուկա, իսկ որպես տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիայի մասնակից երկրներ կդիտարկենք հարևաններին՝ Ադրբեջան, Վրաստան, Թուրքիա և Իրան: Նախ ներկայացնենք Հայաստանի արտաքին առևտուրը նշված երկրների հետ 1995-2005թթ. ընկած ժամանակաշրջանում[4]:

Այսպես, նշված ժամանակաշրջանում ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալներով առաջին տեղում է Իրանը, երկրորդում՝ Վրաստանը և երրորդում՝ Թուրքիան (Տե՛ս աղյուսակ 1)[5]:

[4] Ադրբեջանի հետ Հայաստանի արտաքին առևտուրը չի դիտարկվում պաշտոնական տվյալների բացակայության պատճառով:
[5] Բոլոր տվյալները և հաշվարկները ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության նյութերի:

Աղյուսակ 1: ՀՀ արտաքին առևտրատնտեսական հարաբերությունները Իրանի, Վրաստանի և Թուրքիայի հետ 1995-2005թթ. ընկած ժամանակաշրջանում (մլն. ԱՄՆ դոլար)

Իրան	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005
Ընդհանուր ապրանքաշրջ.	124.8	193.7	131.3	95.5	112.7	110.6	110.6	93.5	92.7	106.8	136.6
Արտահանում	35	43.9	42.6	31.7	34.2	27.7	32.5	31.1	22.5	30.5	28.5
Ներմուծում	89.8	149.8	88.7	63.8	78.5	82.9	78.1	62.4	70.2	76.3	108.1
Տեսակ. կշիռ (%)	13.3	16.8	11.6	8.5	10.9	9.3	9.1	6.2	4.7	5.1	4.9
Վրաստան	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005
Ընդհանուր ապրանքաշրջ.	64.5	54	49.1	37	38.1	34.9	30.8	48.1	51.6	77.6	97.6
Արտահանում	2.7	2.8	10.7	10.2	11.2	15.4	12.4	16.6	18.7	29.1	46.8
Ներմուծում	61.8	51.2	38.4	26.8	26.9	19.5	18.4	31.5	32.9	48.5	50.8
Տեսակ. կշիռ (%)	6.9	4.7	4.4	3.3	3.7	2.9	2.5	3.2	2.6	3.7	3.5
Թուրքիա	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005
Ընդհանուր ապրանքաշրջ.	5.2	12.2	45.5	31.5	41.2	41	34.8	39.6	37.4	41.8	63.7
Արտահանում	2.6	6.0	7.1	2.9	1.1	1.5	1.1	1.4	1.1	2.0	2,5
Ներմուծում	2.6	6.2	38.4	28.6	40.1	39.5	33.7	38.2	36.3	39.8	61.2
Տեսակ. կշիռ (%)	0.5	1.0	4.0	2.8	3.9	3.4	2.8	2.5	1.9	2.0	2.3

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի արտաքին առևտուրը Իրանի հետ 1997-2003 ունեցել է նվազման միտում (2003թ. կազմելով 92.7 մլն. դոլար), իսկ 1995-2005թթ. ընկած ժամանակաշրջանում ամենամեծ ցուցանիշը գրանցվել է 1996թ.՝ կազմելով 193.7 մլն. դոլար: Հարկ է նշել, որ Իրանի հետ արտաքին ապրանքաշրջանառության ծավալի նվազումը հիմնականում պայմանավորված է եղել ներմուծվող ապրանքների ծավալի կրճատմամբ: Սկզբնական շրջանում Իրանից ներմուծվող ապրանքների մեջ մեծ տեսակարար կշիռ էին կազմում հիմնականում առաջին անհրաժեշտության ապրանքները, իսկ ներկայումս հանրապետությունում այդ ապրանքների գծով արդեն կազմակերպվել և զարգանում է արտադրություն: Ինչպես նկատում ենք աղյուսակից, 2004թ. սկսված արտաքին ապրանքաշրջանառությունը Իրանի հետ աճել է (2005թ. կազմելով 136.6 մլն. դոլար): Հարկ է նշել, որ 2004թ. սկսած՝ Իրանի հետ արտաքին ապրանքաշրջանառության ծավալի մեծացումը հիմնականում պայմանավորվել է ներմուծման ծավալների ավելացմամբ:

Վրաստանի հետ Հայաստանի արտաքին առևտուրը 1995-2001թթ. ընկած ժամանակաշրջանում նույնպես ունեցել է նվազման միտում (2001թ. կազմելով 30.8 մլն. դոլար): Ընդ որում, Վրաստանի հետ արտաքին ապրանքաշրջանառության նվազման առանձնահատկությունը այն է, որ ցածր տեմպերով աճել է արտահանման ծավալը և բարձր տեմպերով կրճատվել է ներմուծման ծավալը: Իրավիճակը կտրուկ փոխվեց 2002թ. սկսած, երբ նկատվեց և՛ արտահանման, և՛ ներմուծման բարձր աճի տեմպ: Ինչպես տեսնում ենք, Վրաստանի հետ արտաքին ապրանքաշրջանառության ծավալը արդեն 2005թ. կազմել է 97.6 մլն. դոլար: Վրաստանի և Հայաստանի միջև վերջին տարիներին գրանցված արտաքին առևտրի աշխուժությունը բացատրվում է երկու երկրների ԱՀԿ անդամակցությամբ (Վրաստանը՝ 2000թ. հուլիսի 14, իսկ Հայաստանը՝ 2003թ. փետրվարի 5-ին), որը նրանց հնարավորություն է տալիս առևտուր կատարել միմյանց հետ առավել բարենպաստ պայմաններով, քան նախկինում:

Չնայած Հայաստանի և Թուրքիայի միջև առկա քաղաքական ոչ կայուն վիճակին՝ Հայաստանն այսօր բավականաչափ առևտրատնտեսական կապեր ունի Թուրքիայի հետ, որը կարող է էլ ավելի զարգանալ, եթե երկու երկրների միջև լուծվեն քաղաքական տարաձայնությունները[6]: Հայաստանի արտաքին ապրանքաշրջանառության ծավալը Թուրքիայի հետ 1995-2003թթ. ընկած ժամանակաշրջանում ունեցել է տատանողական բնույթ: 1995-1997թթ. զգալի տեմպերով աճել են և՛ ներմուծման, և՛ արտահանման ծավալները՝ 1997թ. կազմելով համապատասխանաբար 38.4 և 7.1 մլն դոլար: Հարկ է նշել, որ 1997թ. գրանցված արտաքին ապրանքաշրջանառության ծավալը Թուրքիայի հետ (45.5 մլն. դոլար) դիտարկվող ժամանակաշրջանում (1995-2003թթ.) ամենամեծ ցուցանիշն է: 2004թ. սկսած՝ Թուրքիայի հետ արտաքին ապրանքաշրջանառության ծավալը զգալի աճել է՝ 2005թ. կազմելով 63,7 մլն. դոլար: Այս երկրի հետ արտաքին առևտրի առանձնահատկությունը այն է, որ սկսած 1997թ.՝ Թուրքիայի հետ Հայաստանի արտաքին առևտուրը աչքի է ընկել ներմուծվող ապրանքների անհամեմատ մեծ տեսակար կշռով:

Այսպիսով, հակիրճ վերլուծեցինք և ներկայացրինք Հայաստանի արտաքին առևտուրը հարևան երկրների հետ (բացի Ադրբեջանից), որպեսզի փորձենք բացահայտել այդ երկրների միջև տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն

[6]Տե՛ս Թ. Շ. Թորոսյան, Հայաստան-Թուրքիա. առևտրատնտեսական կապեր, Եր., 2001:

գործընթացների զարգացման հնարավորությունը: Ինչպես նշել ենք, Հայաստանը և Վրաստանը ԱՀԿ լիիրավ անդամ են, իսկ Թուրքիան ԱՀԿ հիմնադիր անդամ է 1995թ. մարտի 26-ից: Եթե տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն գործընթացները հակառակ չեն ԱՀԿ նորմերին ու սկզբունքներին, ապա բազմակողմանի առևտրային համագործակցության դեպքում հնարավոր է տարածաշրջանային տնտեսական ինտեգրում: Սակայն տարածաշրջանային առևտրային համաձայնագրերը հիմնականում կազմվում են աշխարհաքաղաքական նկատառումներից ելնելով: Ըստ էության դրանց դերն առևտրային համակարգում վճռորոշ է, սակայն հիմնականում դրանք դիտարկվում են որպես տարբեր երկրների կառավարությունների համագործակցություն՝ քաղաքական և ռազմավարական շահերին համապատասխան: Հայաստանի տարածաշրջանային տնտեսական ինտեգրացման դեպքում մենք ունենք հետևյալ պատկերը: Հակամարտության պատճառով Հայաստանը չունի արտաքին առևտրատնտեսական հարաբերություններ Ադրբեջանի հետ: Թուրքիայի հետ թեկուզ և առկա են արտաքին առևտրատնտեսական հարաբերություններ (հիմնականում ներմուծում), սակայն այդ հարաբերությունները կարգավորված չեն միջպետական մակարդակով: Մյուս հարևան երկիր Վրաստանի ընդհանուր արտաքին քաղաքականությունը խիստ արևմտամետ է: Այս դեպքում Հայաստանը պետք է փորձի վարել հավասարակշռված արտաքին քաղաքականություն Արևմուտքի և ԱՊՀ երկրների (մասնավորպես Ռուսաստանի) հետ: Ավելին, Հայաստանի և Վրաստանի միջև հետագա տարածաշրջանային տնտեսական ինտեգրացումը պետք է ընթանա ավելի բարենպաստ պայմաններում, քան ներկայումս ԱՀԿ-ն է ապահովում, հակառակ դեպքում տարածաշրջանային տնտեսական ինտեգրացումը անիմաստ կլինի:

Այս առումով, եթե նույնիսկ տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն գործընթացները զարգանում են տարածաշրջանի երկրների տնտեսական շահերին համապատասխան, ապա այդ տարածաշրջանի երկրների միջև պետք է առկա լինի սերտ առևտրատնտեսական հարաբերություններ: 2005թ. նշված երկրների հետ հանրագումարային ապրանքաշրջանառությունը կազմում է Հայաստանի ընդհանուր ապրանքաշրջանառության 10.7%-ը: Սա հիմք է տալիս պնդելու, որ Հայաստանի առևտրային համագործակցությունը տեղին է և արդարացնում է սպասվող ակնկալիքները: Սակայն, ամեն դեպքում միջազգային առևտրում տարածաշրջանային առևտրային համաձայնագրերը կշարունակեն էական դեր

ունենալ, քանի որ դա պայմանավորված է տարածաշրջանի երկրների միջև մի շարք տնտեսական, աշխարհաքաղաքական և անվտանգության շահերի առկայությամբ:

Григор Айрапетян. Перспективы региональной экономической интеграции Армении. В современных условиях успешность страны на международной арене определяется степенью интеграции ее экономики в мировое хозяйство путем участия в региональных и/или многонациональных торговых соглашениях. Региональная интеграция обеспечивает более эффективное сотрудничество на основе схожести истории и культуры, а также наличия сравнительно одинакового уровня экономического развития. В этом аспекте в данной статье рассматривается возможность участия Армении в региональных торговых соглашениях с соседними странами (Азербайджаном, Ираном, Турцией и Грузией).